ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2018/212

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 27.12.2018թ. թիվ 27/26-3/24349-18 գրությամբ «Վանարխ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 24.12.2018թ. թիվ 02/16.4/6370-18 գրության հիման վրա 27.12.2018թ. «Վանարխ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. **<u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 24.12.2018թ. թիվ 02/16.4/6370-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ 2018 թվականի ապրիլի 6-ին կազմակերպված ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/4 ծածկագրով Երևանի թիվ 50 հիմնական դպրոցի վերակառուցման նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի մայիսի 17-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) և «Վանարխ» ՍՊԸ-ի միջև կնքվել է N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/4 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված առաջարկությունը և Պայմանագրի 2.1.3 կետը՝ Կոմիտեն վերը նշված կազմակերպության հետ կնքված Պայմանագիրը 2018 թվականի դեկտեմբերի 24-ից միակողմանի լուծել է:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի լիազորված ներկայացուցիչներ Նազարեթյան Արտավազդը և Ավետիսյան Հրաչիկը:

3. <u>«Վանարխ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Վանարխ» ՍՊԸ-ն 16.01.2018թ. գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացրել է գրավոր դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«2018թ. մայիսի 17-ին «Վանարխ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) և «ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի (այսուհետ նաև՝ ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտե կամ Պատվիրատու) միջև կնքվել է Երևանի թիվ 50 հիմնական դպրոցի վերակառուցման նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/4 ծածկագրով պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

www.gnumner.am համացանցային կայքում 24.12.2018թ. հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Վանարխ» ՍՊԸ-ի և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի աշխատանքների ձեռքբերման ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/4 ծածկագրով պայմանագիրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից միակողմանի լուծվել է՝

Պայմանագրի 2.1.3 կետի ուժով: Վերոհիշյալ պայմանագրի լուծման հիմքում դրվել է պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված առաջարկությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

2018թ մայիսի 17-ին «Վանարխ» ՍՊԸ-ի և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի միջև կնքված Երևանի թիվ 50 հիմնական դպրոցի վերակառուցման նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/4ծածկագրով պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

www.gnumner.am համացանցային կայքում 24.12.2018թ. հրապարակված տեղեկատվության համաձայն՝ 2018թ մայիսի 17-ին «Վանարխ» ՍՊԸ-ի և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի միջև կնքված Երևանի թիվ 50 հիմնական դպրոցի վերակառուցման նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/4 ծածկագրով պայմանագիրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից միակողմանի լուծվել է՝ պայմանագրի 2.1.3.-րդ կետի ուժով:

Նույն օրը ՀՀ քաղաքաշինության կոմիտեն «Վանարխ» ՍՊԸ-ին 24.12.2018թ. թիվ 02/16.4/6371-18 ուղղված գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված առաջարկությունը և Պայմանագրի 2.1.3. կետը՝ միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Հայտնում ենք, որ մինչև ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 24.12.2018թ. պայմանագրի միակողմանի լուծման որոշման կայացմանը՝ բազմիցս փորձ է արվել բարդացնել պայմանագրով սահմանված աշխատանքների իրականացումը, քանի որ հանդիսանում էինք անցանկալի գործընկեր:

Արդյունքում՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/4 ծածկագրով պայմանագիր լուծելու 24.12.2018թ. թիվ 02/16.4/6371-18 գրությունը և միևնույն ժամանակ ներկայացնելով «Վանարխ» ՍՊԸ-ի տվյալները՝ «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների» ցուցակում ներառելու նպատակով, որի հիմքում դրվել էր պատասխանատու ստորաբաժանման գրությունը:

Պատասխանատու ստորաբաժանման գրությունում մասնավորապես նշվել է.

«Հայտնում եմ, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ՝ 2018 թվականի մայիսի 17-ի թիվ ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/4 պայմանագրի համաձայն նախատեսվել էին Երևանի թիվ 50 հիմնական դպրոցի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ: Աշխատանքները մեկնարկելեն ավելի քան 6 ամիս առաջ: Դեռ նախագծի մշակման սկզբնական փուլում՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից ուսումնասիրվել և քննարկվել է նախագծային աշխատանքների էսքիզային տարբերակը, որի վերաբերյալ ներկայացվել են բազմաթիվ դիտողություններ և գրավոր առաջարկներ: Մի շարք արձանագրությունների (օգոստոս - նոյեմբեր ամիսներին կայացած խորհրդակցությունների) շրջանակներում ներկայացված դիտողությունների և էական (այդ թվում նորակառույց մարզադահլիճային մասնաշենքի ճարտարապետական հորինվածքի, կոնստրուկտիվ լուծումների, վերակառուցվող մասնաշենքի ռեկրեացիոն մակերեսների, ներքին մակերեսների բնական լուսավորության, սանհանգույցների (այդ թվում հաշմանդամների, ուսուցչական անձնակազմի և աշակերտների համար նախատեսված), հանդերձարանների և առարկայական (տարրական, միջին և հիմնական դպրոցի) դասասենյակների հատակագծային լուծումների, ինժեներական համակարգերի վերաբերյալ) թերությունների առկայությամբ բազմիցս տրվել են համապատասխան հանձնարարականներ՝ սեղմ ժամկետում պայմանագրային պարտավորություններով ամրագրված պահանջներն ապահովելու և նախագիծը լրամշակելու համար:

Սակայն, կապալառու «Վանարխ» ՍՊԸ-ի կողմից դրանք կամ չեն վերացվել կամ էլ կատարվել են մասնակի ծավալով:

Արդյունքում, պայմանագրի տեխնիկական բնութագրով՝ օբյեկտի նկատմամբ նախատեսված նորմատիվ պահանջները չեն բավարարվել և ֆինանսավորման ներկայացված նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները՝ նախագծի կազմը և բովանդակությունը, գնահատվել են որպես թերի՝ օրացուցային գրաֆիկի խախտմամբ (32 օր ուշացումով) ոչ պատշաճ կատարված աշխատանք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պատասխանատու ստորաբաժանումը նպատակահարմար է համարում 2018 թվականի մայիսի 17-ի թիվ ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/4 պայմանագիրը միակողմանի լուծել՝ պայմանագրի 2.1.3 կետի համաձայն:

Խնդրում եմ Ձեր հանձնարարականը՝ պայմանագրի լուծման գործընթացն ապահովելու համար»:

Փաստում ենք, որ «Վանարխ» ՍՊԸ-ի կողմից (այսուհետ՝ Կապալառու) օբյեկտի էսքիզային նախագիծը (առձեռն) Պատվիրատուի համաձայնեցմանն է ներկայացվել բազմիցս, որի վերաբերյալ նշվում է նաև արձանագրություններում:

Սակայն, ամեն անգամ Պատվիրատուի կողմից արձանագրվում էին անհասկանալի «անհամապատասխանություններ», որոնք Ընկերության կողմից շտկվում էին և նորից ներկայացվում Պատվիրատուին:

Հետագայում նույն խնդիրն է առաջացել Ընկերության կողմից ներկայացված նախագծանախահաշվային փաստաթղթերի մասով, որոնք պատասխանատու ստորաբաժանման կողմից գնահատվել են որպես թերի:

Պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածով սահմանված «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի» 6-րդ՝ «Այլ պահանջներ» վերտառությամբ բաժնի համաձայն՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի մասով պետք է ապահովվի համալիր փորձաքննություն:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրություն ենք դարձնում Երևանի թիվ 50 հիմնական դպրոցի՝ օբյեկտի փորձաքննող մարմնի «Շինէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից 27.11.2018թ. ՀՀ քաղաքաշինության կոմիտեին ներկայացված համալիր փորձաքննության եզրակացության վրա, որը շատ ծավալուն է և կմեջբերենք մի քանի

պարբերություն, որոնք հավաստում են, որ «Վանարխ» ՍՊԸ-ի կողմից կատարված նախագծահետազոտական աշխատանքները կատարվել են ըստ նախագծային առաջադրանքի պահանջների, և այսպես.

Ք. Երևանի թիվ 50 հիմն. Դպրոցի վերակառուցման նախագծահետազոտական աշխատանքները կատարվել են համաձայն պատվիրատուի նախագծման առաջադրանքների, ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն «Սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայություն» ՊՈԱԿ Կառուցվածքների սեյսմանակայունության կենտրոնի կողմից տրված տեխնիկական եզրակացության և «Հ.Ա.Կ. Պոլիտեխնիկ» Ա.Կ. կողմից տրված ինժեներա-երկրաբանական հետազննության հիման վրա:

Դիտարկելով փորձաքննության ներկայացված նյութերը «Շինէքսպերտ» ՍՊԸ-ի փորձաքննությունը նշում է, որ՝

1. Նախագծման լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան:

3. Աշխատանքների նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. Կոմիտեի նախագահի 11.09.2017թ. 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին;

4. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփխությունները, լրացումները այլընտրանքային լուծումները քննարկել են նախագծային կազմակերպության հետ համատեղ...:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝ Ելնելով վերոնշվածից՝ «Շինէքսպերտ» ՍՊԸ-ի փորձաքննությունը եզրակացնում է. Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին և երաշխավորվում է հաստատման:

Նշվածը հերթական անգամ ապացուցում է վիճարկվող պայմանագրի լուծման ոչ իրավաչափության և սուբյեկտիվության մասին, քանզի լուծման հիմքում դրվել են ոչ թե համապատասխան օբյեկտի փորձաքննող մարմնի համալար փորձագիտական եզրակացությունները, այլ ընդամենը պատասխանատու ստորաբաժանման գրությունը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք հաշվի առնել այն հանգամանքը, որ «Վանարխ» ՍՊԸ-ն ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/4 պայմանագրի կատարման ողջ ընթացքում իրականացրել է Պատվիրատուի կողմից արձանագրված բոլոր՝ նույնիսկ ամենաչնչին անհամապատասխանությունների շտկումը, այսինքն անգործության չենք մատնել ոչ մի արձանագրված շեղման փաստ և վերջապես ներկայացրել համալրի փորձաքննության արդյունքում հաստատված և երաշխավորված նախագծային փաստաթղթեր, որը փաստում է նաև օբյեկտի փորձաքննող մարմնի «Շինէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը, սակայն այսօր «Վանարխ» ՍՊԸ-ն՝ սուբյեկտիվ պատճառներով հայտնվել է «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում» հայտնվելու վտանգի առաջ:

Ի լրումն 16.01.2019թ. Բողոքներ քննող անձին ներկյացված գրավոր դիրքորոշմանը «Վանարխ» ՍՊԸ-ն 19.01.2019թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՍՑ-ԷՍ-2018/212 ընթացակարգի քննության վերաբերյալ 17.01.2018թ. տեղի ունեցած նիստի ընթացքում Ձեր կողմից պահանջված տեղեկատվությանն ի պատասխան՝ «Վանարխ» ՍՊԸ-ն ստորև ներկայացնում է համապատասխան դիրքորոշումը.

Պայմանագիրը գրանցվել է 31.05.2018թ.:

Կատարման ժամկետն է 150 օրացուցային օր (վերջնաժամկետ՝ 27.10.2018թ.):

Աշխատանքը (նախագծանախահաշվային փաստաթղթերը) գրությունով հանձնվել է 22.10.2018թ. (համաձայնեցված է ՀՀ ԱԻՆ-ի և ՀՀ առողջապահության նախարարության հետ, ներկայացվել է նաև փորձաքննության դրական եզրակացություն):

26.10.2018թ. պատասխանատու ստորաբաժանման նիստի արձանագրությամբ նշվել է ներկայացված աշխատանքի վերանայման կարիք ունեցող խնդիրների անհրաժեշտություն:

«Վանարխ» ՍՊԸ-ի կողմից բոլոր կետերը կատարվել են և վերամշակված նախագիծը համալիր փորձաքննության դրական եզրակացության հետ ներկայացվել է 28.11.2018թ.:

Փորձաքննություն կատարող «Շինէքսպերտ» ՍՊԸ-ն 15.11.2018թ. գրությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղար պարոն Ա. Մկրտչյանին ներկայացրել է բացատրություն կատարված աշխատանքի բոլոր կետերի կատարման վերաբերյալ:

Ավելին, «Շինէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից 27.11.2018թ. ՀՀ Քաղաքաշինական պետական կոմիտեին ներկայացված համալիր փորձագիտական եզրակացությամբ

հավաստվել է, որ «Վանարխ» ՍՊԸ-ի կողմից կատարված (վերամշակված) նախագծահետազոտական աշխատանքները կատարվել են ըստ նախագծային առաջադրանքի պահանջների, և երաշխավորվում է հաստատման:

16.11.2018թ.պատասխանատու ստորաբաժանման ժամանակ զեկուցվել է կատարված աշխատանքների մասին, որի վերաբերյալ առարկություն չի եղել, միայն նշվել է՝

- նախագիծն անհրաժեշտ է ուղղաձիգ հատակագծման նախագծով,

- նախատեսել աշխատանքների առաջնահերթությունը և դրանց փուլային ավարտման հաջորդականությունը, հաշվի առնելով ուսումնական պրոցեսի անընդատության ապահովման կարևորությունը (նշված արձանագրությունը Կոմիտեի կողմից ուղարկվել է էլ. փոստով 27.11.2018թ.) բոլոր աշխատանքները կատարված են:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ 07.12.2018թ. Կոմիտեի աշխատակիցների կողմից դրական պատասխան ստանալուց հետո ներկայացվել է հանձնման-ընդունման արձանագրություն, որը 17.12.2018թ. մերժվել է ամսաթվերի և «Ծառայությունը հանձնեց» և «Ծառայությունը ընդունեց» բառերը՝ «Աշխատանքը հանձնեց» և «Աշխատանքը ընդունեց» բառերի փոփոխելու պատճառով (որի փոփոխությունը հնարավոր չէ կատարել):

Աշխատանքի որակի վերաբերյալ որևէ առարկություն չի եղել:

18.12.2018թ. ուղարկվել է նոր ուղղված ամսաթվերով հանձնման-ընդունման արձանագրություն:

20.12.2018թ. ստացել ենք նոր մերժում՝ արդեն պատճառաբանելով «կից ներկայացվող նախագծանախահաշվային փաստաթղթերում առկա են թերություններ և կատարված աշխատանքը չի համապատասխանեցված պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրի պահանջներին» առանց կոնկրետ թերությունների նշելու:

28.12.2018թ. փոստով ստացել ենք նամակ, որով նշվել է, որ պայմանագիրը միակողմանի լուծվել է 24.12.2018թ. դրությամբ:

Գնումների հետ կապված բողոքը քննող անձ Է. Սարգսյանին խնդրում ենք նկատի ունենալ, որ նշված պայմանագրի լուծման հիմքում դրված պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի գրությամբ չեն նշվել կոնկրետ թերություններ կամ անհամապատասխանություններ, ինչի արդյունքում նախագծանախահաշվային

փաստաթղթերի գնահատվել են պայմանագրի տեխնիկական բնութագրին անհամապատասխան:

Ընդ որում, երբ «Շինէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից 27.11.2018թ ներկայացված համալիր փորձագիտական եզրակացությամբ հավաստվել է, որ «Վանարխ» ՍՊԸ-ի կողմից կատարված (վերամշակված) նախագծահետազոտական աշխատանքները կատարվել են ըստ նախագծային առաջադրանքի պահանջների, և առանձին-առանձին գնահատվել են այդ աշխատանքները, պատասխանատու ստորաբաժանումը իր գրությամբ ընդամենը վերացական արձանագրել է անհամապատասխանություններ. «....կապալառու «Վանարխ» ՍՊԸ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունները կամ չեն վերացվել կամ էլ կատարվել են մասնակի ծավալով:

Ստացվում է, որ լիցենզավորված կազմակերպության կողմից տրված համալիր փորձագիտական դրական եզրակացությունը տվյալ դեպքում ոչ մի նշանակություն չի ունեցել, հաշվի չի առնվել, իսկ ստորաբաժանման ղեկավարը միանձնյա որոշել է, որ առկա է անհամապատասխանություն, ինչի իրավունքը չուներ:»:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էին «Վանարխ» ՍՊԸ-ի տնօրեն Ավետիք Ղուկասյանը և լիազորված ներկայացուցիչներ՝ Արշավիր Ղուկասյանը, Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

4. ՍՑ-ԷՍ-2018/212 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 27.12.2018թ. թիվ 27/26-3/24349-18 գրությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 24.12.2018թ. թիվ 02/16.4/6370-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Վանարխ» ՍՊԸ-ի կողմից 16.01.2019թ. և 19.01.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումները, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Վանարխ» ՍՊԸ-ի միջև 17.05.2018թ. կնքված ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/4 ծածկագրով գնման պայմանագիրը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 24.12.2018թ. «Վանարխ» ՍՊԸ-ին ուղղված թիվ 02/164/6371-18 գրությունը, «Շինէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից 27.11.2018թ. տրված փորձաքննության եզրակացությունը.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Վանարխ» ՍՊԸ-ի միջև 17.05.2018թ. կնքվել է ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/4 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն ստանձնում է Երևանի թիվ 50 դպրոցի վերակառուցման նախագծահետազոտական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ նաև աշխատանք)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:
- 1.2 կետի համաձայն՝ աշխատանքը կատարվում է պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:
- 2.1.2 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի, եթե կատարվել է պայմանագրի թիվ 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա. չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով ահատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ. հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

- 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտել է աշխատանքի կատարման ժամկետը:

- 2.4.1 կետի համաձայն՝ Կատարողը պարավոր է թիվ 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:
- 7.9 կետի համաձայն՝ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, նույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/4 ծածկագրով գնման պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմավել է Երևանի թիվ 50 դպրոցի վերակառուցման նախագծահետազոտական աշխատանքների կատարում: Աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել Պայմանագիրը սահմանված կարգով հաշվառվելու օրվան հաջորդող օրվանից 150 օրացուցային օր:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 23.01.2018թ. N 01-Ա հրամանի հավելվածով ստեղծված պատասխանատու ստորաբաժանման նիստի 29.08.2018թ. արձանագրությամբ արձանագրվել է հետևյալը.

- Երևանի թիվ 50 դպրոցի էսքիզային նախագծի կազմում բացակայում էին անհրաժեշտ ելակետային տվյալները՝ ընդհանուր բացատրագիրը, ինժեներական երկրաբանական եզրակացությունը, տեղանքի հանութը, գոյություն ունեցող մասնաշենքերի կրող կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի մասին եզրակացությունը, մանրամասն չափագրությունները, ինչպես նաև կոնտրուկտիվ և ինժեներական լուծումների վերաբերյալ անհրաժեշտ հաշվարկներն ու առաջարկությունները: Առաջարկվեց վերանայել ճակատային և հատագծային լուծումները, հատկապես սպորտ-դահլիճի արհեստանոցների տեղաբաշխման, նախասրահի ռեակցիայի, դահլիճի 2-րդ հարկի հատագծային լուծումը և առաջին հարկում միջանցի լուսավորության հարցերը:

Նույն արձանագրությամբ պաասխանատու ստորաբաժանումը, հաշվի առնելով «Վանարխ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված էսքիզային նախագծերի թերի կազմն ու

բովանդակությունը, որոշել է «Վանարխ» ՍՊԸ-ին հանձնարարել 10 օրյա ժամկետում ներկայացնել հանձնաժողովի դիտողությունների հիման վրա լրամշակված Երևանի թիվ 50 հիմնական դպրոցի վերակառուցման էսքիզային նախագիծը և նշված ժամկետում չներկայացնելու դեպքում միակողմանի լուծել պայմանագիրը:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 23.01.2018թ. N 01-Ա հրամանով սահմանված նախագծային աշխատանքների գնման գործընթացների կազմակերպման պատասխանատու ստորաբաժանման և կապալառու կազմակերպությունների հետ Երևանի թիվ 50 հիմնական դպրոցի նախագծի էսքիզային տարբերակի քննարկման 18.09.2018թ. արձանագրությամբ արձանագրվել է, որ «Վանարխ» ՍՊԸ-ն ներկայացրել է Երևանի թիվ 50 հիմնական դպրոցի նոր մարզադահլիճային մասնաշենքի կառուցման և գոյություն ունեցող ուսումնական մասնաշենքի վերակառուցման նախագծի էսքիզային տարբերակը, առկա ելակետային տվյալները, նախատեսվող ճարտարապետահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներն ու դրանց ընտրության վերաբերյալ համապատասխան հիմնավորումները:

Ներկայացված նյութերի առկայությամբ պարզվեց հետևյալը.

- նախագծի մշակման համար հիմք հանդիսացող ելակետային տվյալներում բացակայում են ինժեներաերկրաբանական հետազննության արյունքները՝ տեղանքի հանույթը և կոնստրուկտիվ հաշվարկները,
- 280 աշակերտի համար հիմնական դպրոցի ճարտարապետահատակագծային լուծումները չեն համապատասխանում արդի պահանջներին՝ նորակառույց մարզադահլիճային մասնաշենքի ճարտարապետական հորինվածքը, բերակառուցվող մասնաշենքի ռեակցիոն մակերեսները, ներքին մակերեսների բնական լուսավորությունը, սանհանգույցների, հանդերձարանների և առարկայական դասասենյակների հատակագծային լուծումները, հստակ նշված չեն ինժեներական համակարգերի սկզբունքային մոտեցումները և այլն:

Արդիականացվող նախագծի շրջանակներում, որպես էներգախնայող համակարգ՝ առաջարկվում է դիտարկել արևային մարտկոցների կիրառման հնարավորությունը և նախատեսել տարածքի անվտանգության ապահովման տեխնիկական սենյակ:

Նույն արձանագրությամբ պատասխանատու ստորաբաժանումը, որոշել է «Վանարխ» ՍՊԸ-ին առաջարկել ներկայացնել Երևանի թիվ 50 հիմնական դպրոցի նոր մարզադահլիճային մասնաշենքի կառուցման և գոյություն ունեցող ուսումնական մասնաշենքի վերակառուցման նախագծերը՝ համաձայն 17.05.2018թ. թիվ ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/4 պայմանագրով նախատեսված պայմանների և ժամանակացույցի:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 23.01.2018թ. N 01-Ա հրամանով սահմանված նախագծային աշխատանքների գնման գործընթացների կազմակերպման պատասխանատու ստորաբաժանման և կապալառու կազմակերպությունների հետ Երևանի թիվ 50 հիմնական դպրոցի նախագծի էսքիզային տարբերակի քննարկման 16.11.2018թ. արձանագրությամբ արձանագրվել է, որ «Վանարխ» ՍՊԸ-ն ներկայացրել է Երևանի թիվ 50 հիմնական դպրոցի նոր մարզադահլիճային մասնաշենքի կառուցման և գոյություն ունեցող ուսումնական մասնաշենքի վերակառուցման նախագիծը:

Հանձնաժողովի կողմից առաջարկվեց ըստ հնարավորության առանձնացնել կառուցվող և վերակառուցվող մասնաշենքերի նախահաշվային փաստաթղթերը, հաշվի առնելով, որ.

- նախագիծն անհրաժեշտ է լրացնել ուղղաձիգ հատակագծման նախագծով՝ հիմք ընդունելով տեղանքի գեոդեզիական հանույթը,

- նախատեսել աշխատանքների առաջնահերթություններն ու դրանց փուլային ավարտման հաջորդականությունը՝ հաշվի առնելով ուսումնական պրոցեսի անընդհատության ապահովման կարևորությունը:

- ներկայացվեց նաև ՀՀ առողջապահության նախարարության կողմից նախագծի համաձայնեցման վերաբերյալ գրությունը:

ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/4 ծածկագրով գնման պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով պահանջվել է ներկայացնել նախագծանահաշվային փաստաթղթերի համալիր փորձաքննություն:

««Շինէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից տրված փորձաքննության եզրակացության համաձայն՝ «Վանարխ» ՍՊԸ-ի կողմից կատարված նախագծահետազոտական

աշխատանքները կատարվել են նախագծային առաջադրանքի պահանջների համաձայն, մասնավորապես՝

1. Նախագծման լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան:

3. Աշխատանքների նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. Կոմիտեի նախագահի 11.09.2017թ. 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին:

4. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփխությունները, լրացումները այլընտրանքային լուծումները քննարկել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

Եզրակացություն՝ ելնելով վերոնշվածից՝ «Շինէքսպերտ» ՍՊԸ-ի փորձաքննությունը եզրակացնում է. «Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին և երաշխավորվում է հաստատման»:»:

«Վանարխ» ՍՊԸ-ն Պատվիրատուին է ներկայացրել աշխատանքների կատարման վերաբերյալ հանձնման-ընդունման արձանագրությունը, սակայն Պատվիրատուն 17.12.2018թ. ներկայացված հանձնման-ընդունման վերաբերյալ Ընկերությանն է ուղարկում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ կազմված N 1 բացասական եզրակացությունը, որում նշում է բացասական եզրակացություն տրամադրելու հետևյալ հիմքերը՝

- N 18/4-1 արձանագրության հանձնող-ընդունող կողմերի ստորագրման համար անհրաժեշտ է «Ծառայությունը հանձնեց» և «Ծառայություն ընդունեց» բառերը փոխարինել «Աշխատանքը հանձնեց» և «Աշխատանքը ընդունեց» բառերով,

- N 18/4-1 արձանագրության «Աշխատանքը ընդունեց» բառերից հետո անհրաժեշտ է նշել «Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Արտավազդ Նազարեթյան»,

- N 18/4-1 արձանագրության աղյուսակի ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի «15.10.2018թ.» ժամկետը անհրաժեշտ է փոխարինել «27.10.2018թ.»

ժամկետով, իսկ նշված «22.10.2018թ.» փաստացի ժամկետը փոխարինել «28.11.2018թ.» ժամկետով՝ կատարողականի մուտքագրման ամսաթվով:

Հիմք ընդունելով վերոգրյալը, տալիս եմ բացասական եզրակացություն:

Այնուհետև, «Վանարխ» ՍՊԸ-ն՝ 20.12.2018թ. վերացնելով արձանագրված անհամապատասխանությունները, Պատվիրատուին է ներկայացնում ուղղված հանձնման-ընդունման արձանագրությունը, սակայն Պատվիրատուն կրկին տալիս է բացասական եզրակացությունը, այս անգամ որպես բացասական եզրակացություն տրամադրելու հիմք նշելով հետևյալը.

«Կից ներկայացվող նախագծանախահաշվային փաստաթղթերում առկա են թերություններ և կատարված աշխատանքը չի համապատասխանեցված պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրի պահանջներին:

Հիմք ընդունելով պայմանագրի 3.3 կետի պահանջը՝ կատարողական ակտը ետ է վերադարձվում, իսկ պայմանագրի 5.2 կետի համաձայն պայմանագրի գնի նկատմամբ կիրառվում է 0.5% գործակից՝ համապատասխան տուգանքի գանձնման նպատակով: 2.420.000.0×0.5%=12.100.0 ՀՀ դրամ:

Ուշացած օրերի քանակը՝ 32 օր, համաձայն պայմանագրի 5.3 կետի պահանջի՝ տույժի չափը կկազմի՝ 2.420.000.0×32օր×0.1%=77.440.0 ՀՀ դրամ:

Տուժանքի մասին համաձայնագրի 1.4 կետի համաձայն՝ անհրաժեշտ է գանձել նախատեսված 242.000.0ՀՀ դրամի տուժանք:

Պայմանագրային պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու հիմքով տալիս եմ բացասական եզրակացություն՝ պայմանագիրը միակողմանի լուծելու համար:»:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի շինարարության և գիտատեխնիկական նորմավորման վարչության պետը գրությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քատուղարին հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ՝ 2018 թվականի մայիսի 17-ի թիվ ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/4 պայմանագրի համաձայն նախատեսվել էին Երևանի թիվ 50 հիմնական դպրոցի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ:

Աշխատանքները մեկնարկելեն ավելի քան 6 ամիս առաջ:

Դեռ նախագծի մշակման սկզբնական փուլում՝ պատասխանատու ստորաբաժանման կողմից ուսումնասիրվել և քննարկվել է նախագծային աշխատանքների էսքիզային տարբերակը, որի վերաբերյալ ներկայացվել են բազմաթիվ դիտողություններ և գրավոր առաջարկներ:

Մի շարք արձանագրությունների (օգոստոս-նոյեմբեր ամիսներին կայացած խորհրդակցությունների) շրջանակներում ներկայացված դիտողությունների և էական (այդ թվում նորակառույց մարզադահլիճային մասնաշենքի ճարտարապետական հորինվածքի, կոնստրուկտիվ լուծումների, վերակառուցվող մասնաշենքի ռեկրեացիոն մակերեսների, ներքին մակերեսների բնական լուսավորության, սանհանգույցների (այդ թվում հաշմանդամների, ուսուցչական անձնակազմի և աշակերտների համար նախատեսված), հանդերձարանների և առարկայական (տարրական, միջին և հիմնական դպրոցի) դասասենյակների հատակագծային լուծումների, ինժեներական համակարգերի վերաբերյալ) թերությունների առկայությամբ բազմիցս տրվել են համապատասխան հանձնարարականներ՝ սեղմ ժամկետում պայմանագրային պարտավորություններով ամրագրված պահանջներն ապահովելու և նախագիծը լրամշակելու համար:

Սակայն, կապալառու «Վանարխ» ՍՊԸ-ի կողմից դրանք կամ չեն վերացվել կամ էլ կատարվել են մասնակի ծավալով:

Արդյունքում, պայմանագրի տեխնիկական բնութագրով՝ օբյեկտի նկատմամբ նախատեսված նորմատիվ պահանջները չեն բավարարվել և ֆինանսավորման ներկայացված նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքները՝ նախագծի կազմը և բովանդակությունը, գնահատվել են որպես թերի՝ օրացուցային գրաֆիկի խախտմամբ (32 օր ուշացումով) ոչ պատշաճ կատարված աշխատանք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պատասխանատու ստորաբաժանումը նպատակահարմար է համարում 2018 թվականի մայիսի 17-ի թիվ ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/4 պայմանագիրը միակողմանի լուծել՝ պայմանագրի 2.1.3 կետի համաձայն:

Խնդրում եմ Ձեր հանձնարարականը՝ պայմանագրի լուծման գործընթացն ապահովելու համար»:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն կողմից 24.12.2018թ. թիվ 02/164/6371-18 գրությամբ «Վանարխ» ՍՊԸ-ին հայտնել է հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Վանարխ» ՍՊԸ-ի միջև 17.05.2018թ. կնքվել է Երևանի թիվ 50 հիմնական դպրոցի վերակառուցման նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/4 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Հիմք ընդունելով Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված առաջարկությունը և Պայմանագրի 2.13 կետը ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 24.12.2018թ միակողմանի լուծում է Պայմանագիրը՝ 2.420.000 ՀՀ դրամի չափով:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի՝ Պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ ծանուցումը սահմանված կարգով կտեղադրվի www.gnumner.am կայքում:»:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/4 ծածկագրով գնման պայմանագիրը լուծելու մասին հայտարարությունը 24.12.2018թ. հրապարակել է www.procurement.am կայքում:

Ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին հայտնեց, որ «Վանարխ» ՍՊԸ-ի և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի միջև կնքված ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/4 ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծվել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված առաջարկության հիմքով, որում մասնավորապես նշվել է, որ «Վանարխ» ՍՊԸ-ի նախագծային աշխատանքների էսքիզի վերաբերյալ ներկայացվել են բազմաթիվ դիտողություններ և գրավոր առաջարկներ, որոնց շտկման համար տրվել են համապատասխան հանձնարարականներ՝ սեղմ ժամկետում պայմանագրային պարտավորություններով ամրագրված պահանջներն ապահովելու և լրամշակելու համար, սակայն դրանք կամ չեն վերացվել կամ էլ կատարվել են մասնակի ծավալով: Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ արձանագրված անհամապատասխանությունները Ընկերության կողմից պատշաճ ձևով շտկվել են և ներկայացվել Պատվիրատուին: Այնուհետև, Ընկերության կողմից ներկայացված նախագծանախահաշվային փաստաթղթերը գնահատվել են որպես թերի փաստաթղթեր:

Ընկերության ներկայացուցիչը հայտնեց նաև, որ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցիով նախագծանախահաշվային փաստաթղթերի մասով Ընկերությունը պետք է ապահովվեր համալիր փորձաքննություն և համաձայն «Շինէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համալիր փորձաքննության եզրակացության՝ «Վանարխ» ՍՊԸ-ի կողմից կատարված նախագծահետազոտական աշխատանքները կատարվել են ըստ նախագծային առաջադրանքի պահանջների: Ընկերության ներկայացուցիչը հավելեց նաև, որ նշված պայմանագրի լուծման հիմքում դրված պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի գրությամբ նշված չեն եղել կոնկրետ թերություններ կամ անհամապատասխանություններ:

Բողոքներ քննող անձի այն հարցին, թե Պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքում «Վանարխ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախագիծը Պայմանագրի տեխնիկական բնութագրին կամ որևէ իրավական ակտի պահանջներին չհամապատասխանելու հիմնավորում առկա է, թե ոչ, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ ներկայացված նախագծի՝ որևէ իրավական ակտով սահմանված պահանջների նկատմամբ անհամապատասխանության վերաբերյալ Պայմանագիրը միակողմանի լուծելու հիմքում առկա չէ:

Բողոքներ քննող անձը Պատվիրատուի ներկայացուցչից պահանջեց ներկայացնել կամ վկայակոչել որևէ իրավական հիմք, որը կապացուցի, որ ներկայացված նախագիծը չի համապատասխանում Պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին, սակայն վերջինիս կողմից որևէ ապացույց չներկայացվեց:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Վանարխ» ՍՊԸ-ի միջև 17.05.2018թ. կնքվել է ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/4 ծածկագրով գնման պայմանագիր:
- ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/4 ծածկագրով գնման պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմավել է Երևանի թիվ 50 դպրոցի վերակառուցման նախագծահետազոտական աշխատանքների կատարումը:
- ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/4 ծածկագրով գնման պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով պահանջվել է ներկայացնել նախագծանահաշվային փաստաթղթերի համալիր փորձաքննություն:
- ՀՀ քաղաքաշինության կոմիտեն առաջարկել է ներկայացնել Երևանի թիվ 50 հիմնական դպրոցի նոր մարզադահլիճային մասնաշենքի կառուցման և գոյություն ունեցող ուսումնական մասնաշենքի վերակառուցման նախագծերը:
- «Վանարխ» ՍՊԸ-ն ներկայացրել է նշված նախագծերը:
- ««Շինէքսպերտ» ՍՊԸ-ի կողմից տրված փորձաքննության եզրակացության համաձայն՝ «Վանարխ» ՍՊԸ-ի կողմից կատարված նախագծահետազոտական

աշխատանքները կատարվել են նախագծային առաջադրանքի պահանջների համաձայն, մասնավորապես՝

1. Նախագծման լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան:

3. Աշխատանքների նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. Կոմիտեի նախագահի 11.09.2017թ. 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին:

4. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփխությունները, լրացումները այլընտրանքային լուծումները քննարկել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

Եզրակացություն՝ ելնելով վերոնշվածից՝ «Շինէքսպերտ» ՍՊԸ-ի փորձաքննությունը եզրակացնում է. «Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին և երաշխավորվում է հաստատման»:»:

- Պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացվել է գրություն, որի հիման վրա ՀՀ քաղաքաշինության կոմիտեն որոշել է ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/4 ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի լուծել:

- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից «Վանարխ» ՍՊԸ-ի ներկայացված նախագծում արձանագրված առկա թերությունների վերաբերյալ որևէ իրավական կամ այլ հիմնավորում Պատվիրատուի կողմից չներկայացվեց:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պատվիրատուն Պայմանագիրը միակողմանի լուծելիս չի նշել որևէ իրավական հիմք կամ վերաբերելի ապացույց այն մասին, թե ինչով չի համապատասխանում «Վանարխ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված նախագիծը Պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված պահանջներին, հետևաբար Բողոքներ քննող անձը գտնում է, Պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանի լուծելը իրավաչափ չէ:

Ինչ վերաբերում է Պայմանագրի միակողմանի լուծելու այն հիմքին, որը վերաբուրում է Պայմանագրով նախատեսված աշխատանքները 32 օր ուշացնելուն, Բողոքներ քննող անձը

գտնում է, որ տվյալ դեպքում այն ևս անհիմն է, քանի որ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետ հանդիսացել է 27.10.2018թ.-ը, իսկ «Վանարխ» ՍՊԸ-ի կողմից նախագծերը Պատվիրատուին հանձնվել են 22.10.2018թ., որից հետո Պատվիրատուն 16.11.2018թ. արձանագրությամբ արձանագրել է, որ «Վանարխ» ՍՊԸ-ն ներկայացրել է Երևանի թիվ 50 հիմնական դպրոցի նոր մարզադահլիճային մասնաշենքի կառուցման և գոյություն ունեցող ուսումնական մասնաշենքի վերակառուցման նախագիծը և Հանձնաժողովի կողմից առաջարկվել է ըստ հնարավորության առանձնացնել կառուցվող և վերակառուցվող մասնաշենքերի նախահաշվային փաստաթղթերը, հաշվի առնելով, որ նախագիծն անհրաժեշտ է լրացնել ուղղաձիգ հատակագծման նախագծով՝ հիմք ընդունելով տեղանքի գեոդեզիական հանույթը, նախատեսել աշխատանքների առաջնահերթություններն ու դրանց փուլային ավարտման հաջորդականությունը՝ հաշվի առնելով ուսումնական պրոցեսի անընդհատության ապահովման կարևորությունը, ինչպես նաև ներկայացնել ՀՀ առողջապահության նախարարության կողմից նախագծի համաձայնեցման վերաբերյալ գրությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Վանարխ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.12.2018թ. թիվ 27/26-3/24349-18 գրությամբ «Վանարխ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ